

Շնորհեցաք եւ ի ձեռն տէր Գրիգոր արքեպիսկոպոսիզ, ձեզ պարզեւս հոգեւորական՝ զեւղն օծութեան զսրբալոյս եւ զաստուածազործակ սուրբ Մեռոնն ի լուսաւորութիւն նորածնելոցն յաւաղանան: Չնոյն եւ զճակաս նշան հաստատութեանն յաւժունն քահանայութեան եւ ի նորոգութիւն սուրբ Եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Դարձեալ ծանիր, հոգեւոր որդիք մեր ի Տէր, զի ըստ առաքելական կանոնաց եւ ըստ հայրապետաց սահմանադրութեանց, ըստ առաջին հարցն սրբոց, գործ է Արքեպիսկոպոսին ձեռնադրել զմետրնապոլիտս եւ օրհնել զձէթ կնքոյն. եւ այս ոչ հակառակութեան եւ կամ անհնազանդութեան աղագաւ, այլ ըստ եկեղեցական աւանդութեանց, ըստ նախնեացն շաւղաց: Մեք զայն իշխանութիւն եւ զհրամանն տուաք տէր Գրիգոր արքեպիսկոպոսին սուրբ Երուսաղէմայ: Յայսմ հետէ իւր կամքն եղիցի զառնելն եւ զչառնելն:

Գրեցաւ գիրս աւրհնութեան բարձր հրամանիս մերոյ յըստ ի մեզ մարդեղութեան Բանին Աստուծոյ ՌՁԾԺԵ. ամին եւ ի սրբոյն Գրիգորէ ՌՅԺԲ. եւ ի մեծ թվականիս Հայոց ՌԿԲ. ամին: Եւ վասն առաւել հաստատութեան ձեռնադրեցաք մերով սովորական կարմիր ձեռնադրովն»:

Դէպքին ծանօթ է նաև Դարանաղցի (285), որ Մելքիսեդեկի մահը յիշելով կը գրէ.
«Եւ Աւետիսն, որ էր ընկեր սոցին, նա